

Ն. Սաֆարյանի անվ. հ.164 հիմնական դպրոց
«Ապահով համացանց-2015»

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՍՑԵՆԱՐ

Մասնակիցներ՝ 5-9 րդ դասարանի ծնողական խորհուրդների ներկայացուցիչներ

Մեթոդ՝ խմբային աշխատանք

Խմբերը ստեղծվում են հետևյալ կարգով՝ ծնողը ընտրում է նախապես գունավոր թղթից կտրտված **երկրաչափական պատկերներից մեկը**: Խմբերը կազմվում են ըստ գույնի: Յուրաքանչյուր խմբում A4 ֆորմատի թղթերի վրա սունձվում են պատկերները և ստանում են որոշակի բառ: Այնուհետև, երբ բոլոր խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները ապա ստանում ենք Հայաստանի «Ապահով համացանց -2015» կոմիտեյի խորհրդանիշը՝ **Let's create a better internet together.**- **Եկե՛ք միասին ստեղծ ենք ավելի լավ ինտերնետ**, որը հենց բնորոշում է ժողովի նպատակը:

Խմբերին նախապես բաժանված են համացանցի հետ կապ ունեցող իրավիճակներ և հարցադրումներ՝

1. Վերջին ժամանակներում Ձեր երեխան դարձել է մտահոգված, վախեցած, անհանգիստ, չունի ոչ մի մոտիկ ընկեր, ավելի հեշտ շփվում է մեծերի հետ, քան հասակակիցների: **Ինտերնետային ի՞նչ ավագակության** հետևանք կարող են լինել այս հատկանիշները:
2. Համացանցում որոշակի գործողությունների համար երեխան ուզում է Ձեր **բանկային քարտի հաշվեհամարը**: Ի՞նչպիսին կլինեն Ձեր գործողությունները:
3. Արդյո՞ք ծնողները **իրավունք ունեն կարդալու** երեխաների հաղորդագրությունները, տեղյակ լինելու հեռախոսի թղթապանակների պարունակությանը:
4. Երեխան դարձել է **ագրեսիվ**, առավոտյան արթնանում է հոգնած, ճնշված: Համակարգչի մոտ նստած խոսում է խաղի հերոսների հետ կամ ինքն իրեն հետ, մոռանում է հաց ուտելու մասին կամ ուտում է անմիջապես համակարգչի մոտ, մոռացել է անձնական հիգիենայի մասին:
5. (Իրական դեպք Եկատերինբուրգում) 12-տարեկան տղան տուն եկավ ինտերնետ ակումբից սուր գլխացավերով: Մայրը շտապ օգնություն կանչեց, երեխային հիվանդանոց տարան: Մեկ շաբաթ վերակենդանացման բաժնում մնալուց հետո երեխան մահացավ՝ գլխուղեղի արյան շրջանառության խիստ խախտում ախտորոշմամբ:

6. Արդյո՞ք Ձեր տան համակարգիչը դեկավարվում է ընտանիքի անդամներից մեկի կողմից: Խմբերում քննարկելուց հետո մասնակիցները ներկայացնում են հարցը կամ իրավիճակը, համեմատում իրենց ընտանիքում առկա նման խնդիրների հետ, ներկայացնում են իրենց կողմից համացանցի օգտագործման հնարավորությունները, աա բոլորը միասին կշռադատում լավն ու վատը:

Համացանցի և՛ լավ, և՛ վատ կողմերի ոչ ամբողջական գիտելիքները լրացվում են ժողովը վարողի կողմից:

Ծնողներին ներկայացվեց **Safe.am** կայքը և **kasperski internet security** ծրագրի հնարավորությունները:

Յուրաքանչյուր խումբ ընթերցեց համացանցի ապահով օգտագործման խորհուրդ:

Համացանցի հետ կապված խնդիրների լուծումը պահանջում է նաև հոգեբանական մոտեցում: Նշվեց, որ մեդիա միջոցները շատ կարևոր դեր կարող են կատարել համացանցում բարեկիրթ մթնոլորտ ստեղծելու գործում:

Ժողովը վարեց՝ ինֆորմատիկայի ուսուցչուհի Անժելիկա Հակոբյանը: